կէրին էր հետապնդում, դիպչի նախ և առաջ երեխաներին։ Պողպատի չախմախը փախցնում էր ֆաշկէրին երեխաների մոտից և այդպիսով նաև պաշտպանում վերջիններին կայծակնահար լինելուց։

Աղբագրագետների ուշադրությունը վաղուց գրավել է այն դիտողությունը, որ բոլոր ազգերի մեջ, որտեղ մետաղին հատկացվում էր մի հատուկ զորություն, նույն զորությունը չի վերագրվում պղնձին, մանավանդ կովկասյան ժողովուրդների մեջ, այլ միայն ու միայն երկաթին։ Այդ իրողությունը պետք է բացատրել թվում է թե նրանով, որ երկաթը մարդկային աշխատանքի զարգացման ընթացքում ունեցել է շատ ավելի խորը, հեղափոխիչ և վճռական նշանակություն, և երկաթն ավելի քան թե պղինձը, բրոնզը աջակցել է աշխատանքային գործիքների և զենքի կատարելագործման և գործադրության թե՛ ընդարձակման և թե՛ բազմազանացման, ուստի այդ տեսակետով ավելի է ներշնչել մարդուն վստահություն կյանքի պայքարի մեջ և անկախ է դարձրել ֆաշկէրի միջամտությունից։ Եթե ածուխի, աղի, հացի, մաղի հմայիչ զորությունը կարելի է շաղկապել տնտեսական և հասարակական զարգացման այս կամ այն փուլի հետ, պղնձին քաշկավան ուժ այժմ չհատկացնելն ավելի դժվար բացատրելի է այն պատճառով, որ հնագույն գերեզմանների մեջ հանդիպում ենք շատ նախնական ժամանակներից բրոնզե զարդեր՝ ապարանջաններ, մատանիներ, գոտիներ, որոնք անշուշտ հմայիլնէրի՛ թլրսիմնէրի նշանակություն ունեին և համարվում էին չար ոգիներին քշող իրեր։ Երկաթի գերիշխելուց հետո պղինձը կորցրել է այդ զորությունը։

Շատ ավելի դժվար է նույնպիսի գործնական բացատրություն գտնել խաչի գծագրությանը վերագրվող զորության համար։ Զանգեզուրի հայը շատ հաճախ էր դիմել այդ զորության պաշտպանությանը, ոչ պակաս, քան այլ գավառների իր համազգայինները։ Նա էլ խաչ էր քաշում խմորին, պանրին, աղին[117], մսուրի մեջ ձիու համար կեր դրած գարու երեսին, ցորենը լցրած հորի գլխին կապում էին հասկերից խաչ միշտ միևնույն նպատակով, որ ֆաշկէրը չմոտենան, չփչացնեն խմորը, պանիրը և աղը (աղը չզրկեն աղիությունից), չհեծնեն ձիու մեջքին, չքրտնեցնեն նրան, չբորբոսեցնեն, չծաղկեցնեն, չգողանան հորի միջի ցորենը։ Նույն նպատակով խոտի կամ հասկերի դեղը կամ խնձորի կույտը պատում էին խաչաձև ձգած ձողերով։ Խաչաձև վարշամակ էին ձգում պատանված ննջեցյալի կրծքին, որ ֆաշկը չմոտենա։ Որպեսզի գերեզմանում ֆաշկէրը չընակվեն ննջեցյալից առաջ, նոր փորած գերեզմանի բերանին թիակներն ու բահը դրվում էին խաչաձև։ Ննջեցյալին թաղելուց հետո հողաթմբի վրա խաչ էին գծում։ Հորանջելիս բերանը խաչակնքում էին։ Գիշերը ջուրը խմելիս Քրիստոսի անունը տալուց բացի, երեսն ու կուրծքը խաչակընքում էին։ Եթե մեկը քայլում էր կշեռքի, հրացանի կամ պառկած մարդու վրայով[118] և այդպիսով կշեռքի, հրացանի, պառկած մարդու ուղղության հետ խաչ էր գծագրում՝ այդպիսի մեկին անմիջապես հարկադրում էին ետ քայլել, վերացնել խաչի նշանը, եթե ոչ՝ հացը կկտրվեր կամ կթանկանար, հրացանը չէր կրակի, կամ գնդակը նպատակից կվրիպեր, մարդը բոյ չէր քաշի, կամ կհիվանդանար։ Խաչէրկաթավ, նույնիսկ ոչ թե երկաթից, այլ փայտից շինած, պաշտպանում էին յէրթիկը, իհարկե ոչ պատահաբար այդ տեղով անցորդին անկումից պաշտպանելու համար, դրա համար խաչէրկաթը շատ բարակ էր։

---

[117] СМОМПК, вып. XIII, отд. I, стр. 112, 118, вып. XXXIV, отд. III, стр. 97.
[118] СМОМПК, вып. XIII, отд. I, стр. 112, вып. XVII, отд. III, стр. 200.